ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 60** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության մասնակիցներին «Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման ու չեղարկման մասին» որոշման նախագիծ նախապատրաստելու եւ խորհրդակցություններ անցկացնելու մասին տեղեկացնելու կարգի 13-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին

«Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության (Եվրասիական տնտեսական միության 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) 7-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 150-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 35 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության մասնակիցներին «Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման ու չեղարկման մասին» որոշման նախագիծ նախապատրաստելու եւ խորհրդակցություններ անցկացնելու մասին տեղեկացնելու կարգի 13-րդ կետում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Հանձնաժողովը խորհրդակցություններ չի անցկացնում ապրանքների միասնական ցանկի 2.7, 2.8 եւ 2.12 բաժիններում ներառված այն ապրանքների նկատմամբ միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնելիս, որոնց առնչությամբ երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արձանագրության 4-րդ կետով նախատեսված եւ Միության պաշտոնական կայքում հրապարակվող՝ ոչ սակագնային կարգավորման միջոցներ, քանի որ այդ որոշումների կայացման հետաձգումը հանգեցնում է անդամ պետությունների շահերին էական վնաս հասցնելուն:».

բ) երրորդ պարբերությունում «այդ» բառը փոխարինել «համապատասխան» բառով:

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ (Եվրասիական տնտեսական միության 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) նախատեսված՝ երրորդ երկրների հետ առեւտրում ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման ազդեցությունը կրող ապրանքների միասնական ցանկի 2.7, 2.8 եւ 2.12 բաժիններում ներառված ապրանքների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոցներ կիրառելու մասին որոշումների նախագծերի նախնական հրապարակումը (հանրային

քննարկումը) ապահովվում է ոչ սակագնային կարգավորման հարցերի իրավասությունն ունեցող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտի կողմից՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի VIII բաժնին համապատասխան:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան